

Ա-92

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԻԳՈՐ ՄԻՔԱՅԵԼԻ ԱՐՇԱԿՅԱՆ

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ
ԿՈՎԿԱՍՈՒՄ 1991-2001 Թ.Թ.

Է.00.02 «Համաշխարհային պատմություն»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂԱՍԳԻՐ

*Մեծարգո պարոն
Վ. Գրիգորյանին
կարգաւնջելով Ձ.
Ներշնչումովս*

ԵՐԵՎԱՆ 2008

Միս

Ատենախոսության քեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Ռ.Ա. Սաֆրասայան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր
Ա. Գ. Ավագյան
պատմական գիտությունների թեկնածու
Ա. Դ. Դումանյան

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2008 թ. մայիսի 29-ին՝ ժ. 15:00-ին, ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՂ-ի 006 «Համաշխարհային
պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (Հասցեն՝ 375019,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24 գ., 11-րդ հարկ, ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտի նիստերի դահլիճ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2008 թ. ապրիլի 25-ին

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար

պատմական գիտությունների դոկտոր՝

Պ. Ա. Չորանյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայի Հանրապետության հարավկովկասյան քաղաքականության
համակողմանի ուսումնասիրությունն ունի կարևոր գիտական նշանակություն և
արդիականություն: Թեման արդիական է Թուրքիայի հետխորհրդային առաջին
տասնամյակի արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից
մեկի նպատակներն ու առանձնահատկությունները բացահայտելու տեսանկյու-
նից: Չպետք է մոռանալ, որ հարավկովկասյան տարածաշրջանն ավանդաբար
մեծ տեղ է զբաղեցրել Թուրքիայի արտաքին քաղաքական գերակայությունների
մեջ: Հարկ է նշել նաև, որ Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկա-
սում լուրջ նշանակություն ունի հարավկովկասյան երկրների և մասնավորապես
Հայաստանի համար:

ԽՍՀՄ-ի փլուզուման արդյունքում Թուրքիան կորցրեց իր նախկին
կարևորությունը Արևմուտքի համար, և ի հայտ եկավ նրա աշխարհաքաղաքա-
կան մեկուսացման իրական վտանգ: Միաժամանակ ԽՍՀՄ-ի փլուզմամբ Թուր-
քիայի համար ստեղծվեց նպաստավոր աշխարհաքաղաքական իրավիճակ՝ Հա-
րավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում իր աշխարհաքաղաքական ազ-
դեցությունը հաստատելու համար, ինչին նպաստում էր ԱՄՆ-ի քաղաքական ա-
ջակցությունը և վերոհիշյալ տարածաշրջաններում Ռուսաստանի Դաշնության
ռազմաքաղաքական դիրքերի թուլացումը: Նման պայմաններում Թուրքիան կա-
րողացավ որոշակի հաջողությունների հասնել Հարավային Կովկասում իր նպա-
տակները իրականացնելու տեսակետից:

Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության կարևորագույն բա-
ղադրիչներից են հանդիսանում թուրք-ադրբեջանական հարաբերությունները:
Թուրքիան, Ադրբեջանի հետ ավանդաբար ունենալով լեզվական, պատմամշա-
կութային և քաղաքական սերտ հարաբերություններ, ԽՍՀՄ փլուզումից հետո
հիանալի հնարավորություն ստացավ ամրապնդել իր դիրքերը Ադրբեջանում:
1990-ականների սկզբին թուրք-ադրբեջանական հարաբերությունների ընդլայն-
ման և ամրապնդման համար առանձնակի կարևոր գործոն հանդիսացավ
պանթյուրքիզմի գաղափարակիր և թուրք-ադրբեջանական սերտ հարաբերու-
թյունների կողմնակից Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորությամբ «Ազգային ճակատի»
իշխանության գալը:

1990-ականների երկրորդ կեսից Վրաստանի հետ Թուրքիայի հարաբե-
րությունների սերտացումը դիտվում է Թուրքիայի հարավկովկասյան քաղաքա-
կանության մյուս կարևոր բաղադրիչներից մեկը: Ըստ էության, 1990-ականների
կեսերին Անկարային հաջողվեց էականորեն ամրապնդել իր դիրքերն Ադրբեջա-
նում և Վրաստանում, ինչը մեծապես պայմանավորված էր թուրք-ադրբեջանա-

կան, բուրբ-վրացական ռազմաքաղաքական շահերի համընկմամբ ու համագործակցության սերտացմամբ: Այս համագործակցությունը Թուրքիայի համար լուրջ նախադրյալներ ստեղծեց ընդհանուր առմամբ հարավկովկասյան տարածաշրջանում իր համար չափազանց կարևոր աշխարհաքաղաքական և աշխարհատրմ-տեսական նախագծեր իրականացնելու համար:

Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության ձևավորման գործում իր նշանակությունն ունեցավ նաև նրա՝ ՆԱՏՕ-ի անդամ հանդիսանալը: Ադրբեջանն ու Վրաստանը, որդեգրելով ակնհայտ արևմտյան կողմնորոշում, Թուրքիան դիտում էին որպես տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը սահմանափակող գլխավոր պատնեշ, ինչպես նաև կարևոր գործընկեր ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ մերձեցման ոլորտում: Ադրբեջանն ու Վրաստանը մեծապես շահագրգռված էին Թուրքիան տարածաշրջանային անվտանգության համակարգի անբակտեի մաս դարձնելու մեջ: Փաստորեն, հարավկովկասյան այս երկու երկրները Թուրքիան դիտում էին որպես օժանդակող ուժ ՆԱՏՕ-ին իրենց հնարավոր անդամակցության հարցում:

Հարկ է նշել, որ Հարավային Կովկասում Թուրքիայի և Ռուսաստանի միջև ընթացող հակամարտությունն իր դերն ուներ Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մեջ՝ հարկադրելով Թուրքիային ավելի գուսպ, հավասարակշռված քաղաքականություն իրականացնել Հարավային Կովկասում: Այս համատեքստում ճիշտ է հավելել, որ Թուրքիան Հայաստանի հանդեպ կիրառեց ճնշման հնարավոր բոլոր միջոցները, բացի ուղղակի ռազմական միջամտությունից՝ մինևույն ժամանակ խուսափելով դիվանագիտական հարաբերություններ հաստատել նրա հետ:

Բոլոր վերը նշված հանգամանքները ակներև են դարձնում սույն ատենախոսության թեմայի կարևորագույն արդիական նշանակությունը ինչպես Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության հիմնադրույթների մշակման տեսանկյունից, այնպես էլ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման առումով: Սույն թեման ուղղակիորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության անվտանգության հայեցակարգի մի շարք հիմնական բաժինների հետ, և նրա համալիր ուսումնասիրությունը խիստ կարևոր է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության որոշ խնդիրների ավելի խորը ընկալման համար:

Սույն թեմայի ուսումնասիրումը կարևորվում է նաև նրանով, որ հնարավորություն է տալիս հասկանալ մեր հարևան պետության հարավկովկասյան քաղաքականության հիմնական ուղղություններն ու նպատակները և դրանց ազդեցությունը Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության ապագա գործընթացներում:

2. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է 1990-ականներին Թուրքիայի Հանրապետության տարածաշրջանային քաղաքականությանն առնչվող խնդիրների համակողմանի և հիմնարար ուսումնասիրության անհրաժեշտությամբ, որն իրականացնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ դրույթները՝

- հետազոտել ԽՍՀՄ փլուզման հետևանքով Հարավային Կովկասում ստեղծված նոր քաղաքական իրողությունների պայմաններում Թուրքիայի համար ի հայտ եկող աշխարհաքաղաքական հեռանկարները,
- ուսումնասիրել Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության ակտիվացումը և դրա հիմնական նախադրյալները,
- բացահայտել տարածաշրջանում Թուրքիայի արտաքին քաղաքականության խնդիրներն ու գերակայությունները և ցույց տալ դրանց զարգացումը հետխորհրդային առաջին տասնամյակում,
- վերլուծել հարավկովկասյան տարածաշրջանում Թուրքիայի և Ռուսաստանի շահերի բախումը և դրանց կոնկրետ դրսևորումները,
- պարզաբանել Հարավային Կովկասում Թուրքիայի ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդմանն ուղղված քայլերը և դրան նպաստող հիմնական գործոնները,
- ուսումնասիրել Հարավային Կովկասում Թուրքիայի ռազմավարական և աշխարհատնտեսական նախագծերը,
- բացահայտել Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, մասնավորապես նրա հակահայկական դիրքորոշումը ԼՂ հիմնահարցում և դրա պատճառները,
- հետազոտել Թուրքիայի քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ և այդ համատեքստում քննարկել նրա քաղաքականությունը վրաց-աբխազական հիմնահարցում,
- ուսումնասիրել Ադրբեջանի դերը Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մեջ:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության հետ կապված առանձին խնդիրներ, մասնավորապես ՀՀ և Թուրքիայի երկկողմ հարաբերությունները, ԼՂ-ի հիմնահարցում Թուրքիայի որդեգրած դիրքորոշումը և հարավկովկասյան տարածաշրջանում ռուս-թուրքական հակամարտությունը ներկայացվել են հայրենական պատմագրության մի շարք հայտնի ներկայացուցիչների աշխատու-

յուններում ու գիտական հոգվածներում, ինչպես և ուսումնասիրվել են արտասահմանյան պատմագրության ներկայացուցիչների կողմից: Մակայն Թուրքիայի հետխորհրդային առաջին տասնամյակի հարավկովկասյան քաղաքականության խնդիրներն ու նպատակները, նրա հիմնական ուղղությունները չեն դարձել ամբողջական գիտական ուսումնասիրության առարկա: Ատենախոսության թեման հայրենական թուրքագիտության մեջ դեռևս չի արժանացել առանձին և համակողմանի ուսումնասիրության: Սույն աշխատությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով փորձ է՝ չիրատարակված սկզբնաղբյուրների և գիտական աշխատությունների ուսումնասիրությամբ համալիր ներկայացնելու Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը, նրա հետապնդած նպատակներն ու տարածաշրջանում Թուրքիայի հավակնությունների հեռանկարները:

4. ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական տեսանկյունից ատենախոսությունն ընգրկում է Հարավային Կովկասի երկրների անկախության առաջին տասնամյակը (20-րդ դարի 90-ականների սկզբից մինչև 2001 թ. ընկած ժամանակահատվածը): Նման ժամանակագրական սահմանների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ԽՍՀՄ փլուզման արդյունքում Հարավային Կովկասում ստեղծվել էին քաղաքական նոր իրողություններ: Հետխորհրդային առաջին տասնամյակում Թուրքիան սկսեց ակտիվ ջանքեր գործադրել՝ ներթափանցելու հետխորհրդային տարածաշրջան: Օգտվելով 1990-ականների ընթացքում Ադրբեջանի և Վրաստանի հետ ձևավորված սերտ հարաբերություններից՝ Թուրքիան փորձում էր ոչ միայն ամրապնդել իր դիրքերը Հարավային Կովկասում, այլև հանդես գալ որպես Ռուսաստանին հակակշռող գործոն: Մյուս կողմից, 2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունները աշխարհաքաղաքական լուրջ տեղաշարժերի հանգեցրեցին ողջ աշխարհում, ինչն իր հերթին փոփոխություններ մտցրեց Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության հիմնական նպատակների և գերակայությունների մեջ:

5. ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության, նրա նախադրյալների և գերակայությունների իրականացման գործընթացի հետ կապված տարատեսակ հարցադրումների, տեսակետների, աղբյուրագիտական նյութի վերլուծությունն ու փաստերի համեմատական-համադրական ուսումնասիրությունը:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ առաջ քաշված հիմնական դրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել Թուրքիայի

նորագույն պատմության արտաքին քաղաքականության հիմնահարցերին նվիրված ուսումնասիրություններում: Բացի այդ, աշխատության դրույթները կարող են օգտակար լինել պետական համապատասխան մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելու, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնահարցերի շրջանակներում Թուրքիայի դիրքորոշումն ավելի հստակ պատկերացնելու համար:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, երիտասարդ արևելագետների 27-րդ (2006 թ.) և 28-րդ (2007 թ.) հանրապետական գիտաժողովներին ներկայացված զեկույցներում: Ատենախոսությունը հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի ընդլայնված նիստում:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության հիմնական դրույթներն ուսումնասիրելիս օգտվել ենք հայերեն, ռուսերեն, անգլերեն և թուրքերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրներից ու ուսումնասիրություններից: Հետազոտությանը մեծապես նպաստել են պաշտոնական հրատարակումները, քաղաքական գործիչների հայտարարություններն ու ելույթները, պարբերականները, հայ և օտարազգի հետազոտողների՝ վերոհիշյալ թեմային նվիրված արժեքավոր աշխատություններն ու հոդվածները: Ատենախոսության մեջ քննարկվող խնդիրների ուսումնասիրության հիմնական սկզբնաղբյուրներ են Հայաստանի Ազգային Արխիվի նյութերը¹: Դրանցում պարունակվում են հարուստ փաստագրական նյութեր՝ Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների հաստատմանն ուղղված երկու երկրների պաշտոնատար անձանց հանդիպումների ու բանակցությունների վերաբերյալ: Կարևոր սկզբնաղբյուրներ են նաև ՀՀ արտգործնախարարության պատմադիվանագիտական բաժնի, ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության Թուրքիայի բաժնի նյութերն ու տեղեկագրերը, որոնց թվում հատկապես մեծ արժեք են ներկայացնում 1990-ականների առաջին կեսին Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականությանն ուղղված հոդվածների և փաստաթղթերի ժողովածուները, որոնք մեզ հնարավորություն են ընձեռում իրական պատկերացում կազմել ոչ միայն Թուրքիայի հա-

¹ Հայաստանի Ազգային Արխիվ, ֆոնդ 326, ցուցակ 9, գործ 192, գործ 70:

րավկովկասյան քաղաքականության հիմքերի և նպատակների, այլև Հայաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության հիմնական ուղեցիղների ու աղբյուրների մասին²:

Թեմայի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն բուրբ հեղինակներ Ռամզան Օզեյի³, Սեվեր Մեթինի⁴, Նավազի Չորայի⁵, Չարիք Ավչարի⁶, Մուսաֆա Այդընի⁷, Դույգու Սեզերի⁸, Մեհմեդ Թուրքուզույի⁹, Սուաթ Բիլգեի¹⁰, Իդիլ Թունցերի¹¹ աշխատությունները: Նրանցում առկա են մի շարք կարևոր փաստեր ինչպես 1990-ականներին Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության մասին, այնպես էլ տվյալ ժամանակահատվածում հետխորհրդային տարածաշրջանում ռուս-թուրքական սուր մրցակցության և հետագա համագործակցության համար ստեղծված նախադրյալների մասին: Մասնավորապես Մուսաֆա Այդընի աշխատություններում թեև առկա են որոշ կանխակալ մոտեցումներ Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության մի շարք ասպեկտներում, այնուամենայնիվ պետք է նշել, որ նրա աշխատությունները մեծ մասամբ օբյեկտիվորեն արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի Թուրքիայի

հարավկովկասյան քաղաքականության հիմնական գերակայությունները: Մասնավորապես նա իր «Էթնիկ հակամարտությունը և անվտանգությունը Կենտրոնական Ասիայում և Կովկասում: Թուրքիայի դերը» հոդվածում հստակորեն անդրադարձ է կատարում հետխորհրդային ժամանակաշրջանում Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում Թուրքիայի հիմնական գերակայություններին ու ակնկալիքներին և դրանց իրականացման ուղղությամբ Անկարայի իրականացրած գործողություններին: Միևնույն ժամանակ, անդրադառնալով հարավկովկասյան էթնիկ հակամարտություններին, թուրք հեղինակը իրավամբ նշելով, որ այդ հակամարտությունները կարող էին խանգարել Թուրքիայի տարածաշրջանային աշխարհատեսական նախագծերի իրականացմանը, այնուամենայնիվ անաչառ կերպով չի ներկայացնում այդ հակամարտությունների հանդեպ Թուրքիայի որդեգրած քաղաքականությունը և դրանցում Անկարայի հետապնդված նպատակները¹²:

Նույնը չենք կարող ասել Ռամզան Օզեյի աշխատությունների մասին, որտեղ հեղինակը, ելնելով իր պանթուրքիստական քաղաքական հայացքներից և նախապատվությունից, նյութերի ընտրողական մոտեցում է ցուցաբերում՝ խիստ գերազանահատելով Թուրքիայի դերը ոչ միայն տարածաշրջանում, այլև ամբողջ աշխարհում: Այսպես, Ռամզան Օզեյը «Թյուրքական աշխարհը համաշխարհային թատերաբեմում» գրքում ոչ միայն չափազանցնում է «թյուրքական աշխարհի» դերը և աշխարհաքաղաքական նշանակությունը, այլև ընդգծված վառ գույներով է ներկայացնում «Թյուրքական Միության» (Türk Birliği) գաղափարը և դրանում Թուրքիային հատկացված դերակատարությանը՝ «օրինականացնելով» Թուրքիայի գերիշխանությունը Բալկաններում և Եվրասիայում¹³:

Հարկ է առանձնացնել թուրք հեղինակներ Չ. Օնիսի¹⁴, Օ. Քոջամանի¹⁵, Չ. Բարանի (թուրքական ծագումով ամերիկացի)¹⁶ և Մ. Օգյուբչուի¹⁷ աշխատություններում պարունակվող մոտեցումները, որոնք հատկապես կարևոր են կասպիական ածխաջրածնային ռեսուրսների շուրջ ընթացող մրցապայքարում Թուրքիայի քաղաքականությունն ավելի հստակ պատկերացնելու տեսանկյունից: Հարկ է նշել, որ թուրք հեղինակների վերոհիշյալ աշխատություններում մի շարք

² ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 3, գործ 159, ցուցակ 5, գործ 243, ցուցակ 6, գործ 63, գործ 64, ՀՀ ԱԳՆ, Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, Հաշվետվություն, 2000թ. սեպտեմբերի 8-12-ը՝ Ստամբուլ կատարված գործադրման վերաբերյալ, ՀՀ ԱԳՆ, Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, Հայաստան-Թուրքիա, Ժամանակագրություն, էջ 5, 7, 8:

³ Ramzan Özey, Dünya Platformunda Türk Dünyası, Aktif Yayınlevi, İstanbul, 1999:

⁴ Sever Metin, Kafdağı'nın Bu Yüzü: Türkiye'deki Kafkas Kökenliler, İstanbul, Doğan Kitapçılık, 1999:

⁵ Nazmi Çora, Birleşik Türk Devletleri, Q-Matris Yayınları, İstanbul, 2004:

⁶ Zakir Avşar, Solak Ferruh, Türkiye ve Turk Cumhuriyetleri, Vadi Yayınları, Ankara, 1998:

⁷ Mustafa Aydın, Turkish Foreign Policy: Framework and Analysis, Ankara, Stratejik Araştırmalar Merkezi, 2005. p. 70; Mustafa Aydın and Kostas Ifantis, International Security Today: Understanding Change and Debating Strateg, Ankara, Strategic Research Center, 2006; Mustafa Aydın, Regional Cooperation in the Black Sea and the Role of Institutions, Perceptions: Journal of International Affairs, Volume X, Autumn 2005, pp. 57-85; Mustafa Aydın, Turkey and Central Asia: Challenges of Change, Central Asian Survey, Vol. 15, 1996, pp. 157-177; Mustafa Aydın, Ethnic Conflict and Security in Central Asia and Caucasus: The Role of Turkey, Marco Polo Magazine, Vol. 3, 1998, p. 1-7; Mustafa Aydın, Turkish Policy Toward the Caucasus www.ciaonet.org/olj/co/co_jul02/co_jul02f.pdf; Mustafa Aydın, New Geopolitics of Central Asia and the Caucasus: Causes of Instability and Predicament, p. 1-40, <http://www.sam.gov.tr/sampapers.php>:

⁸ Duygu Bazoğlu Sezer, From Hegemony to Pluralism: The Changing Politics of the Black Sea, SAIS Review, vol. 17, No. 1, Winter-Spring 1997, pp. 1-30; Duygu Bazoğlu Sezer, Turkish- Russian Relations a Decade Later: From Adversity to Managed Competition, Perceptions: Journal of International Affairs, Volume VI / March – May 2001, p. 1-11:

⁹ Mehmet Tütüncü, «The Caucasus Policy of Turkey (1990-97): An Evaluation», in Tütüncü, ed., Caucasus: War and Peace: The News World Disorder and Caucasia, Haarlem: SOTA, 1998:

¹⁰ Suat Bilge, An analysis of Turkish- Russian Relations, Perceptions: Journal of International Affairs, Volume II / June-August 1997, p.1-12:

¹¹ İdil Tuncer, The Security Policies of the Russian Federation: The “Near Abroad” and Turkey, Turkish Studies, vol. 1, No. 2, Autumn 2000, pp. 95-112:

¹² Mustafa Aydın, Ethnic Conflict and Security in Central Asia and Caucasus: The Role of Turkey, Marco Polo Magazine, Vol. 3, 1998, p. 3-6:

¹³ Ramzan Özey, Dünya Platformunda Türk Dünyası, Aktif Yayınlevi, İstanbul, 1999, s. 20-57:

¹⁴ Ziya Onis, Turkey and Post-Soviet States: Potential and Limits of Regional Power Influence, MERIA, Volume 5, No. 2 - June 2001, pp. 66-74:

¹⁵ Омер Коджаман, Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период, М., 2004:

¹⁶ Zeyno Baran, The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Implications for Turkey, The Central Asia-Caucasus Institute, Silk Road Studies Program, May 2005, p. 103-118:

¹⁷ Mehmet Öglütçü, Caspian Energy "Poker Game" and Turkey: Prospects for a New Approach, the CEPMLP Internet Journal, Volume 8, Abstract 5. www.dundee.ac.uk/cepmlp/journal/html/vol8/vol8-5.html:

պատմական փաստեր և իրողություններ միակողմանի են ներկայացվում կամ ուղղակի խեղաթյուրվում են հոգուտ թուրքիայի շահերի: Մասնավորապես, Ջեյնո Բարանը իր «Բարու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը: Թուրքիայի դերակատարությունը» աշխատությունում ոչ միայն հանգամանորեն անդրադարձ է կատարում տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսների համար մղվող պայքարին, այլև մատնանշում է Բարու-Թբիլիսի-Ջեյհան նախագծի իրագործումից թուրքիայի աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական սպասելիքները՝ մինևույն ժամանակ ոչ օբյեկտիվ կերպով ներկայացնելով վերոհիշյալ նախագծի իրագործման ուղղությամբ թուրքիայի ձեռնարկած քայլերը¹⁸:

Ատենախոսության մեջ քննարկվող մի շարք հարցերի լուսարանմանը և ճիշտ ընկալմանը մեծապես նպաստել են Ռ. Սաֆրաստյանի¹⁹, Ն. Հովհաննիսյանի²⁰, Ա. Հովհաննիսյանի²¹, Ա. Ավագյանի²², Հ. Դեմոյանի²³ արժեքավոր աշխատությունները. որոնք օգտակար են եղել հատկապես Հայաստանի նկատմամբ թուրքիայի արտաքին քաղաքականության նկատակները ուսումնասիրելիս: Հիշյալ աշխատությունները պարունակում են կարևոր փաստագրական և վերլուծական նյութ ԼՂ հիմնահարցում թուրքիայի դիրքորոշման և դրա դրդապատճառների մասին: Օրինակ, Ռուբեն Սաֆրաստյանն իր «Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. աշխարհառազմավարական զինադադար» հոդվածում ոչ միայն հանգամանորեն անդրադառնում է 1990-ականների սկզբին ռուս-թուրքական աշխարհաքաղաքական հակասությունների հիմնարար ասպեկտներին՝ ներ-

կայացնելով քննարկվող ժամանակաշրջանում նրանց միջև լարվածության նախադրյալներին, այլև վերլուծում է 1990-ականների երկրորդ կեսից Ռուսաստանի և Թուրքիայի երկկողմ հարաբերությունների բարելավման դրդապատճառները²⁴: Նիկոլայ Հովհաննիսյանը «Ղարաբաղի հիմնահարցը. գործոններ, չափորոշիչներ, լուծման տարբերակներ» աշխատությունում մանրամասն վերլուծության է ենթարկում միջազգային գործոնների, մասնավորապես Թուրքիայի դերը ԼՂ հիմնահարցի լուծման գործում: Աշխատությունում հանգամանորեն ներկայացվում են 1990-ականներին հիմնահարցի կարգավորման՝ շրջանառության մեջ գտնվող մի շարք տարբերակներ, դրանց դրական և բացասական կողմերը²⁵: Հարկ է անդրադառնալ նաև Հայկ Դեմոյանի «Թուրքիան և Ղարաբաղյան հակամարտությունը» աշխատությանը, որտեղ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո նրա հանդեպ թուրքիայի որդեգրած դիրքորոշմանը, ինչպես նաև հստակորեն վերլուծության է ենթարկում ԼՂ հակամարտությունում Թուրքիայի ակնհայտ հակահայկական դիրքորոշման հիմնական դրդապատճառները և հակամարտության ընթացքում Ադրբեյջանին ցուցաբերած ռազմաֆինանսական և դիվանագիտական աջակցության մեխանիզմներն ու ծավալները²⁶:

Ռուս հեղինակներ Ե. Ուռազովայի, Գ. Ստառչենկովի Վ. Շոռոխովի, Ա. Սվարանցի, Կ. Հաջիևի, Ս. Ժիլցովի, Վ. Հուսեյնովի, Վ. Սիտյանի և այլոց աշխատությունները ևս մեծ դեր են խաղում ուսումնասիրության թեմայի տարբեր ասպեկտների պարզաբանման գործում²⁷: Մասնավորապես այս աշխատություններում առկա են բազմաթիվ նշանակալից փաստեր, որոնք էապես նպաստում են հետխորհրդային տարածաշրջանում և մասնավորապես Հարավային Կովկասում թուրքիայի քաղաքականությունը, հարավկովկասյան էթնիկ հակամարտություններում ռուս-թուրքական մրցակցությունը, ադրբեյջանական նավթի շուրջ ընթացող

¹⁸ Zeyno Baran, The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Implications for Turkey, The Central Asia-Caucasus Institute, Silk Road Studies Program, May 2005, p. 104-109:

¹⁹ Ռ. Սաֆրաստյան, Հնարավոր չէ 21-րդ դարում պատմեշներ ստեղծել հարևանների միջև... Երևան, 2003, Ռ. Սաֆրաստյան, Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. աշխարհառազմավարական զինադադար.- 21-րդ դար, 2005, No. 4, էջ 34-46: Сафрасян Р., Об идеологическом обосновании региональной политики Турции: Концепция Евразии, Южный Кавказ: региональная безопасность и стабильность.- Материалы конференции. Под общей редакцией Гаянэ Новиковой. Редакторы А. Мельян, С. Саркисян. Перевод А. Мельян, Ереван, 2004, с. 70-77; Сафрасян Р., Значение изучения армяно-турецких отношений для современной теории международных отношений: предварительные замечания, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 2002, թիվ 21, էջ 147-155:

²⁰ Ն. Հովհաննիսյան, Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան 1996, թիվ 16, էջ 9-19: N. Hovhannisyanyan, The Karabakh Problem. Factors, Criteria, Variants of Solution, Yerevan, 1999, Николай Оганесян, Некоторые особенности этнорегиональной политики Армении, Этническая и региональная политика Армении и Грузии, Материалы Круглого стола 16-19 апреля 1999 г., Ереван, 1999, сс. 53-66:

²¹ Ա. Հովհաննիսյան, ԽՍՀՄ փլուզումը, «Թուրք միասնության» գաղափարը և Ղարաբաղյան հարցը (1990-1995-ականների բուրբակի հրապարակումների լուսարանումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան 2001, թիվ 20, էջ 74-81:

²² Ա. Ավագյան, Թուրք ազգայնամուտների գործունեությունն Ադրբեյջանում 1990-1994 թթ., Հայկական բանակ, 3 (49), 2006, էջ 48-56; А. Авакян, Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX — первая четверть XX вв.), Ереван, Музей-институт Геноцида армян, 2001:

²³ Демоян Г., Турция и Карабахский конфликт, Ереван, 2006:

²⁴ Ռ. Սաֆրաստյան, Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. աշխարհառազմավարական զինադադար.- 21-րդ դար, 2005, No. 4, էջ 34-41:

²⁵ N. Hovhannisyanyan, The Karabakh Problem. Factors, Criteria, Variants of Solution, Yerevan, 1999, p. 52-104:

²⁶ Демоян Г., Турция и Карабахский конфликт, Ереван, 2006, с. 65-137:

²⁷ Уразова Е., Экономическое сотрудничество Турции и тюрских государств СНГ, М., 2003; Старченков Г.И., Нефть и газ в экономике и политике Турции (XIX-начало XXI вв.), М., 2003; Шорохов В., Политика Турции в Закавказье и национальные интересы России, в: Россия и Турция на пороге XXI века: на пути в Европу или в Евразию, Московский Центр Карнеги, вып. 14, 1997, с. 46-67; Сваранц А., Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Академия гуманитарных исследований, Москва, 2002; Гаджиев К.С., Геополитика Кавказа, Москва 2001; Жильцов С. С., Зоин И. С., Ушаков А. М., Геополитика Каспийского региона, Москва, Международные Отношения, 2003; Гусейнов В., Каспийская нефть, экономика и геополитика, М., «Олма Пресс», 2002; Митяев В.Г., Внутривосточное развитие независимого Азербайджана в свете его геополитического положения // Независимый Азербайджан: новые ориентиры: Монография. Т.1 М., РИСИ, 2000:

մրցապայքարում Թուրքիայի քաղաքականությունն ավելի հստակ պատկերացնելու համար:

1990-ականներին հետխորհրդային տարածաշրջանում Թուրքիայի փարած քաղաքականությունը, ինչպես նաև ռուս-թուրքական մրցապայքարում առկա հիմնական գործոններն ավելի ճիշտ ըմբռնելու համար մեծապես օգտակար են եղել արևմտյան հեղինակներ Ջ. Բեթգինսկու, Գ. Վինրոուի, Ս. Բորնելլի, Է. Հերցինգի, Պ. Հենզի և Հ. Կրամերի, Ս. Կաուֆմանի, Մ. Բիշկուի և Ֆ. Դե Փաուի, Ս. Բաումանի, Թ. Գոլցի արժեքավոր աշխատությունները²⁸: Այսպես, Գարեթ Վինրոուն իր աշխատություններում մեծ մասամբ հստակորեն և օբյեկտիվորեն ընդգծում է հետխորհրդային ժամանակաշրջանում հարավկովկասյան և կենտրոնասիական տարածաշրջանում Թուրքիայի համար ստեղծված նոր աշխարհաքաղաքական բարենպաստ իրողությունները և դրա արդյունքում նրա հետապնդած շահերն ու ակնկալիքները: Օրինակ՝ «Թուրքիայի հարաբերությունները Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի հանրապետությունների հետ» հոդվածում նա անդրադարձ է կատարում ինչպես ԽՍՀՄ փլուզումից հետո հարավկովկասյան էթնիկ հակամարտությունների ընթացքում Թուրքիայի որդեգրած դիրքորոշմանը և այդ հակամարտություններում ռուս-թուրքական մրցակցությանը, Կենտրոնական Ասիայի նորանկախ թյուրքալեզու հանրապետությունների հետ Թուրքիայի տնտեսական, քաղաքական և մշակութային հարաբերություններին, այնպես էլ կասպիական ռեսուրսների արտահանման և մասնավորապես Բաքու-

²⁸ Brzezinski Zbigniew and Sullivan Paige, Russia and Commonwealth of independent States: documents, data, and analysis, New York, M.E. Sharpe, 1997; Бжезинский З. Великая Шахматная Доска. Господство Америки и его геостратегические императивы, М., Международные Отношения, 2002; Gareth M. Winrow Turkey and the Caucasus: Domestic Interests and Security Concerns. London, Royal Institute of International Affairs, 2000; Gareth M. Winrow, Turkey and Newly Independent States of Central Asia and Transcaucasus, MERIA, Volume 1, No. 2 - July 1997, p. 1-10; Winrow M. Gareth, Turkey's relations with the Transcaucasus and the Central Asian republics.- Perceptions: Journal of International Affairs, March-May, 1996, 128-145; Cornell E. Svante, Undeclared War, Journal of South Asian and Middle Eastern Studies, vol. 20, No.4, Summer 1997, p.1-24; Cornell E. Svante, Turkey and the Conflict in Nagorno Karabakh: A Delicate Balance, Middle Eastern Studies, vol. 34, No. 1, January 1998, pp.52-71; Svante E. Cornell, The Nagorno-Karabakh Conflict, Department of East European Studies, Uppsala University, 1999; Edmund Herzing, The New Caucasus, Armenia, Azerbaijan and Georgia, London, The Royal Institute of International Affairs, 1999; Paul B. Henze, Turkey's Caucasian Initiatives, Foreign Policy Research Institute, 2001, pp. 81-91; H. Kramer, Will Central Asia Become Turkey's Sphere of Influence.- Perceptions: Journal of International Affairs, March-May, 1996, p.1-7; Kaufman Stuart, Modern Hatreds: The Symbolic Politics of Ethnic War, London, Cornell University Press, 2001; M. B. Bishku, Turkey, Ethnicity, and Oil in the Caucasus, Journal of Third World Studies, Vol.18 No.2, 10.01.2001, p. 1-8; F. De Pauw, Turkey's Policies in Transcaucasia. - Contested borders in the Caucasus, VUB University Press, 1996, <http://poli.vub.ac.be/publi/ContBorders/eng/ch0801.htm>, Bowman Steve, Conventional Armed Forces in Europe (CFE): Flank Agreement and Treaty, Congressional Research Service, <http://www.house.gov.csce>, 1998; Thomas Goltz, Letter From Eurasia: The Hidden Russian Hand, Foreign Policy, No. 92, Fall 1993, pp. 92-116:

Թբիլիսի-Ջեյհան նախագծի շուրջ Թուրքիայի իրականացրած գործողություններին²⁹:

Ի տարբերություն նրա՝ Սվանտե Բորնելլը իր աշխատություններում, ցուցաբերելով ակնհայտ կողմնակալ դիրքորոշում, մի շարք պատմական փաստերն ու իրողությունները անաչառ կերպով չի ներկայացնում: Այսպես, նա իր «ԼՂ հակամարտությունը» աշխատությունում, անդրադառնալով Ղարաբաղյան հակամարտության պատմությանը, դրա զարգացման ընթացքին և նրա առաջացմանն առնչվող պատմական փաստերին, խիստ ընդգծված ադրբեջանամետ դիրքորոշում է ցուցաբերում՝ խեղաթյուրելով մի շարք ակնհայտ պատմական իրողություններ³⁰:

Ատենախոսության մեջ լայնորեն օգտագործվել է թուրքական, հայկական, անգլիական, ֆրանսիական, ամերիկյան և ռուսական մամուլը³¹:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք իրենց հերթին ստորաբաժանվում են ութ ենթագլուխների, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկերից:

Ներածության մեջ խոսվում է թեմայի արդիականության հիմնավորման և աշխատանքի նպատակների մասին, պարզաբանվում է աշխատանքի գիտական նորույթը, հիմնավորվում է աշխատանքի գործնական նշանակությունը, տրվում են թեմայի ժամանակագրական սահմաններն ու օգտագործված գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԽՍՀՄ ՓԼՈՒՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ», իր հերթին բաղկացած է երեք ենթագլուխներից: «ԽՍՀՄ փլուզումը և Թուրքիայի արտաքին քաղաքականության վերածակալորումը Հարա-

²⁹ Winrow M. Gareth, Turkey's Relations With The Transcaucasus And The Central Asian Republics.- Perceptions: Journal of International Affairs, March-May, 1996, 129-142:

³⁰ Svante E. Cornell, The Nagorno-Karabakh Conflict, Department of East European Studies, Uppsala University, 1999, p. 3-82:

³¹ Hürriyet, Tercüman, Milliyet, Sabah, Cumhuriyet, Turkish Daily News, Zaman, Radikal, Yeni Şafak, Akşam, 525-ci gazetesi, Star, Türkiye, Yeni Yüzyıl, Marje, Turkish Weekly, Yedi Yıldız, GerçekZerkalo, Uqq, ժամանակ, Հայկական բանակ, 21-րդ Դար, Независимая Газета, Литературная газета, Аргументы и факты, Свободная Грузия, Коммерсант, Красная Звезда, Новое время, Российские вести, Associated Press, Financial Times, Chicago Tribune, The Guardian, International Herald Tribune, Central Asian Survey, Christian Science Monitor, MERIA, Marco Polo Magazine, Daily Telegraph, Turkish Studies, The Middle East, Survival, Journal of South Asian and Middle Eastern Studies, Journal of Third World Studies, Jamestown Monitor, Perceptions: Journal of International Affairs, Journal Of Muslim Minority Affairs, Journal of Commerce, Transition, Արմենպրես գործակալություն, Ադիանապրես գործակալություն, Turan, Anadolu news agency, Caspian news agency, Reuters, Agence France-Presse, ИТАР-ТАСС:

վային Կովկասում» ենթազխում անդրադարձ է կատարվում ԽՍՀՄ փլուզման առաջին տարիներին հետխորհրդային տարածաշրջանում Թուրքիայի գործունեության ակտիվացմանը: Մասնավորապես լուսարանվում են այդ տարիներին Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում Թուրքիայի աննախադեպ ակտիվացման հիմնական նախադրյալներն ու դրան նպաստող մի շարք գործոնները: Բացի այդ, հանգամանորեն ուսումնասիրվում են Հարավային Կովկասում Թուրքիայի հետապնդած աշխարհաքաղաքական նպատակները և Ռուսաստանի հետ մրցապայքարը:

Ըստ մի շարք տեսարանների՝ 1980-ականների վերջին ԽՍՀՄ-Արևմուտք հակամարտության թուլացման և ԽՍՀՄ-ի փլուզման նախանշանների ի հայտ գալու պայմաններում Թուրքիան սկսեց կորցնել իր նախկին նշանակությունը Արևմուտքի համար: Սա հանգեցրեց նրան, որ Թուրքիայի ղեկավար և հասարակական-քաղաքական մտքի շրջանակներում սկսվեց ակտիվորեն քննարկվել նոր արտաքին քաղաքականության մշակման անհրաժեշտության հարցը: Արտաքին քաղաքական գերակայությունների որոշման հարցում Թուրքիայում լուրջ քննարկումներ էին գնում, և առկա էին տարբեր դիրքորոշումներ նոր աշխարհակարգի պայմաններում Թուրքիայի դերակատարության վերաբերյալ:

Թեև ԽՍՀՄ-ի և Արևմուտքի միջև մերձեցման գործընթացը թուրք քաղաքական գործիչների մոտ ստեղծեց մեկուսացման և խոցելիության զգացումներ, մեր կարծիքով, Խորհրդային Միության փլուզումը Թուրքիային նոր ռազմավարական հնարավորություններ ընձեռեց: Կոմունիստական վարչակարգի տապալումը Ռուսաստանում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում կրոնական և էթնիկական հատկանիշներով Թուրքիայի հետ ընդհանրություն ունեցող հանրապետությունների ի հայտ գալը Անկարայի համար ստեղծեց բարենպաստ միջավային իրավիճակ: Ինչպես նշում է թուրք գիտնական Օմեր Զոջամանը «Հետխորհրդային աշխարհակարգը Թուրքիայի համար նոր աշխարհ բացեց, իսկ դրա հետ մեկտեղ՝ հնարավորություն՝ դուրս գալու երկակի մեկուսացումից. մի կողմից Եվրոպայից, որն իրեն մերժել էր, մյուս կողմից՝ արաբական Արևելքից, որն իրեն չէր ընդունում»³²: ԽՍՀՄ փլուզումը և Հարավային Կովկասում ինքնիշխան պետությունների ի հայտ գալը հիմնարար կերպով փոխեց Թուրքիայի եվրասիական քաղաքականությունը: Հարավային Կովկասը աշխարհատնտեսական, ռազմավարական և անվտանգության տեսանկյունից մեծ կարևորություն էր ներկայացնում Թուրքիայի համար: Ուստի Թուրքիան սկսեց ակտիվ քայլեր ձեռնարկել՝ ներթափանցելու Հարավային Կովկաս: Այդ ուղղությամբ նրա առաջին քայլերից մեկը եղավ Ադրբեջանի և Վրաստանի հետ սերտ հարաբերություններ հաստատելու քաղաքականությունը: Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում իր

քաղաքականությունն իրականացնելիս Թուրքիան ստացավ Արևմուտքի և մասնավորապես ԱՄՆ-ի աջակցությունը: Օգտվելով ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանի դիրքերի և ազդեցության էական թուլացումից, ունենալով Արևմուտքի աջակցությունը՝ Թուրքիայի ղեկավարները սկսեցին հավակնոտ հայտարարություններ անել, թե իբր Թուրքիայի գլխավորությամբ ստեղծվելու է 120 միլիոն թյուրքալեզու բնակչությամբ նոր թյուրքական աշխարհ: Մասնավորապես, Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալն ի լուր ամբողջ աշխարհի հայտարարեց, որ 21-րդ դարը լինելու է «Թյուրքական դար»³³:

Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից են թուրք-ադրբեջանական հարաբերությունները: Հարավային Կովկասում Թուրքիան հենց սկզբից նախապատվությունը տվեց Ադրբեջանին: Թուրք-ադրբեջանական հարաբերությունների ընդլայնման և ամրապնդման համար առանձնակի կարևոր գործոն հանդիսացավ պանթյուրքիստական հայացքներ կրող և ընդգծված թուրքամետ կողմնորոշում ունեցող Արովիթա Էլչիբեյի գլխավորությամբ «Ազգային ճակատի» իշխանության գալը³⁴:

Երկրորդ ենթազխում, որը վերնագրված է «Թուրքիան և վրաց-արխազական հակամարտությունը 1991-1994 թթ.», հանգամանորեն պարզաբանվում է 90-ականների սկզբներին վրաց-արխազական հակամարտությունում Թուրքիայի որդեգրած դիրքորոշումը: Ուսումնասիրվում է պատերազմում արխազական կողմի հաղթանակին արտերկրում բնակվող հյուսիսկովկասյան ժողովուրդների ներդրումը:

Թուրքիան կարևորում էր Վրաստանի դերը նրա աշխարհագրական դիրքի, ռազմավարական, տնտեսական նշանակության տեսանկյունից: Ունենալով բավականին սերտ հարաբերություններ Ադրբեջանի հետ՝ Թուրքիան Վրաստանի հետ հարաբերությունների բարելավմամբ ակնկալում էր ուժեղացնել իր ազդեցությունը ողջ տարածաշրջանում: Այս համատեքստում պետք նշել, որ Թուրքիան բավականին լուրջ կարևորություն էր տալիս նաև Աբխազիային և թուրք-արխազական հարաբերություններին: Աբխազիան, որը կարևոր դիրք էր զբաղում սևծովյան ավազանում և կովկասյան տարածաշրջանում, ռազմավարական և տնտեսական տեսանկյունից մեծ նշանակություն ուներ Թուրքիայի համար: Աբխազիայի հետ հարաբերություններում Թուրքիան իր քաղաքական նպատակները հետապնդելիս օգտագործում էր թուրք-արխազական մշակութային և տնտեսական հարաբերությունները:

³² Jolyon Naegele, Turkey: Foreign Policy Objectives- Part Two, RFE/RL, 13.08.1998, www.binfo.com/places/Bulgaria/news/98-08/aug13b.rfe; Turkish Daily News, 05.06.1992:

³⁴ Graham E. Fuller, Turkey faces East: New orientations toward the Middle East and the old Soviet Union, Santa Monica, RAND, 1992, p. 56; Сваранц А. Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Академия гуманитарных исследований, Москва, 2002, с. 167:

³² Коджаман О., Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период, М., с.85:

Մինչ 90-ականների կեսերը Թուրքիան արխագական հիմնահարցում իրեն բավականին գուսպ էր պահում, ինչը պայմանավորված էր նրանով, որ Անկարան այդ հիմնահարցում դժվարին երկրնտրանքի առջև էր կանգնած: Մի կողմից նրա ռազմավարական շահերից բխում էր սերտ համագործակցություն Վրաստանի հետ, մյուս կողմից՝ անհրաժեշտ էր հաշվի առնել Թուրքիայում արխագամետ դիրքորոշում ունեցող հասարակական կարծիքը: Սակայն 1993 թ. վերջերին և 1994 թ. ընթացքում Թուրքիան սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել Վրաստանին՝ նրան դիտելով որպես Կասպից ծովից ադրբեջանական նավթի փոխադրման համար առավել նպատակահարմար տարանցիկ երկիր: Բացի այդ, Վրաստանի հանդեպ Թուրքիայի քաղաքականության փոփոխությունը մեծապես պայմանավորված էր նաև Ռուսաստանի ակտիվ քայլերով՝ վերականգնելու ԽՍՀՄ փլուզման արդյունքում Հարավային Կովկասում իր սասանված գերակա դիրքը³⁵: Վրաց-արխագական պատերազմում Թուրքիայի դիրքորոշման վրա ազդող կարևոր գործոն էր նաև Թուրքիայի արխագական և չեքեզական ակտիվությունը, որը շոշափելի աջակցություն է ցուցաբերել հակամարտության ընթացքում արխագական կողմի հաղթանակին: Վրաց-արխագական պատերազմում արխագներին էապես աջակցել են Թուրքիայից ժամանած մեծաթիվ ազգությամբ թուրք կամավորները, որոնք մեծ համակրանք էին տաժում արխագ ժողովրդի հանդեպ³⁶: Մեր կարծիքով Արխագական հիմնահարցում Թուրքիայի ոչ հստակ դիրքորոշումն իր բացասական ազդեցությունը թողեց թուրք-վրացական հարաբերությունների վրա:

«Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ և ԼՂ հիմնահարցը (1991-1994 թթ.)» վերնագրով երրորդ ենթագլխում փորձ է արվում պարզարանել հայ-թուրքական հարաբերությունները ԽՍՀՄ փլուզումից և հայոց անկախ պետականության վերականգնումից հետո: Մասնավորապես, քննարկվում են 90-ականների սկզբներին հարավկովկասյան տարածաշրջանում Թուրքիայի հեռահար նպատակները և այդ քաղաքականության շրջանակներում Հայաստանի նկատմամբ Թուրքիայի որդեգրած դիրքորոշումը: Բացի այդ, հանգամանալից կերպով լուսաբանվում է ԼՂ հակամարտությունում Թուրքիայի ակնհայտ ադրբեջանամետ քաղաքականությունը և նրա շրջանակներում Ադրբեջանին ցուցաբերած հսկայական ռազմատեխնիկական, նյութական և դիվանագիտական աջակցությունը:

Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերություններում որակական նոր փուլ սկսվեց Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո: 1991 թ. դեկտեմբերի 16-ի որոշումով Թուրքիայի կառավարությունը ճանաչեց Հայաստանի անկախությունն, ի թիվս նախկին ԽՍՀՄ հանրապետությունների:

Թուրքիան, թեև ճանաչեց Հայաստանի անկախությունը, այնուամենայնիվ, չտապեց Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Նա, վկայակոչելով Հայաստանի Անկախության հռչակագիրը, իր քայլը պատճառաբանեց Հայաստանի հողային պահանջներով³⁷: Թեև Թուրքիան ցուցադրաբար հրաժարվեց դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ՝ առաջ քաշելով նախապայմաններ, այնուամենայնիվ 90-ականների սկզբներին պաշտոնական Անկարան ձգտում էր որոշակի հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ, մասնավորապես տնտեսական բնագավառում՝ հավանություն տալով Ալաթոնի ծրագրին և պատրաստակամություն հայտնելով Տրապիզոնի նավահանգիստը ՀՀ տրամադրության տակ դնել: Սրա հետ մեկտեղ Թուրքիան փորձեց հայտ ներկայացնել՝ հայ-թուրքական հարաբերությունները տնտեսական հարրությունից քաղաքական հարրություն տեղափոխելու՝ ջանալով Ղարաբաղի հիմնահարցում միջնորդի դեր ստանձնել: Այս կապակցությամբ Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը, 1992 թ. հունվարին մասնակցելով թուրք հայտնի հրապարակախոս Մեհմեթ Ալի Բիրանդի «32-րդ օր» հեռուստահաղորդմանը, նշեց, որ Թուրքիան մեծապես կնպաստի հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորմանը, միայն թե ՀՀ-ն ու Ադրբեջանը շարունակեն վստահել նրան³⁸:

1992 թ. փետրվարից սկսած ԼՂ հիմնահարցը դարձավ կարևոր քաղաքական գործոն Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերություններում: Թուրքիան, դարաբաղյան հակամարտության գործում Հայաստանի հանդեպ որդեգրելով անբարյացակամ վերաբերմունք, շտապեց հայ-թուրքական հարաբերությունները ներկայացնել թշնամություն սերմանող լույսի ներքո՝ կապելով դրանք երրորդական գործոնների հետ և առաջ քաշելով ինչ-ինչ նախապայմաններ³⁹: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ԼՂ հիմնահարցում, ձգտելով հնարավոր աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին, Թուրքիան Հայաստանի հանդեպ իր քաղաքականության շրջանակներում կիրառեց ճնշման բոլոր հնարավոր միջոցները, բացի ուղղակի ռազմական միջամտությունից:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԱՆ ԵՎ ԹՈՒՐԿԻԱՆ 1995-2001 ԹԺ»: Նրանում ուսումնասիրվում է 1990-ականների երկրորդ կեսից Հարավային Կովկասում Թուրքիայի արտաքին

³⁵ Коджаман О., նշվ. աշխ., с.147:

³⁶ Yedi Yıldız, Aylık Dergisi, Eylül 1993, s. 4-6:

³⁷ Արամ Անանյան, Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Երևան, 2004, էջ 6:

³⁸ Ազգ, 01.02.1992:

³⁹ Նիկոլայ Հովհաննիսյան, Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը.- Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, թիվ 16, Երևան, 1996, էջ 14:

քաղաքականությունը: 1990-ականների կեսերից ուժեղացավ ռուս-թուրքական մրցակցությունը հարավկովկասյան տարածաշրջանի համար:

Առաջին՝ «Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ 1995-2001 թթ.» ենթագլխում մանրամասն քննության են առնվում քննարկվող շրջանում Հայաստանի հանդեպ Թուրքիայի քաղաքականության հիմնական մոտեցումները: Հանգամանորեն անդրադարձ է կատարվում ԼՂ հակամարտությունում զինադադարի հաստատումից հետո Հայաստանի նկատմամբ Թուրքիայի որդեգրած քաղաքականությանը, Թուրքիայի և Հայաստանի միջև քաղաքական և դիվանագիտական շփումներին ու առևտրատնտեսական հարաբերությունների հաստատմանն ուղղված հայ և թուրք գործարարների փորձերին: Այս ենթագլխում մեծ ուշադրություն է դարձվում Հայաստանում իշխանափոխության արդյունքում ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հիմնահարցի ի հայտ գալուն, Ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված քայլերին և Թուրքիայի դիրքորոշմանը:

90-ականների երկրորդ կեսին Հայաստանի հետ փոխհարաբերություններում Թուրքիայի քաղաքական դիրքորոշման մեջ որոշակի փոփոխություն նկատվեց: Թուրքիան Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման հայտարարություններ էր անում և համապատասխան փորձեր ձեռնարկում: Անկարայի կողմից հայ-թուրքական հարաբերությունների բարելավման փորձերի շրջանակներում տպավորիչ էր 1995 թ. փետրվարին Թուրքիայի ԱԳ նախարար Մուրադ Քարայաչլընի հայտարարությունը, ըստ որի Թուրքիան դեմ չէր ՀՀ տարածքով կասպիական նավթամուղի անցման հնարավորությանը⁴⁰: Թուրքիայի նման դիրքորոշման կարևոր դրոշմապատճառներից էր Հարավային Կովկասում Ռուսաստանի դիրքերի ուժեղացումը, ինչի արդյունքում կասկածի տակ դրվեցին Հարավային Կովկասում Ռուսաստանի ազդեցությանը հակակշռելու և հայ-ադրբեջանական հակամարտությունում որոշիչ դեր խաղալու Թուրքիայի հնարավորությունները: Ըստ էության, Հայաստանի հետ հարաբերությունների բարելավմանն էր ուղղված 1995 թ. ապրիլին Թուրքիայի կառավարության որոշումը՝ բացել իր օդային տարածքը դեպի Հայաստան և այնտեղից ուղևորվող օդանավերի համար:

Չնայած Թուրքիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության փաստին, այնուամենայնիվ Թուրքիայի և Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաների միջև ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում հանդիպումներ ու շփումներ: Այս համատեքստում հատկապես հետաքրքրական էր 1999 թ. նոյեմբերի 18-19-ը Ստամբուլում ԵԱՀԿ գազաթաժողովի շրջանակներում Ս. Դեմիրելի և Ռ. Քոչարյանի հանդիպումը: Հանդիպման ընթացքում

⁴⁰ Независимая Газета, 18.02.1995:

Թուրքիայի նախագահը, նշելով, որ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կախված է Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության լուծումից, մասնավորապես հայտարարել էր, որ ԼՂ հիմնահարցի խաղաղ լուծման արդյունքում Հայաստանը կարող է ներառվել տարածաշրջանի նավթամուղային նախագծերում: Դրան ի պատասխան, Ռ. Քոչարյանը նշել է. «Ոչ մեկը չունի որևէ պատրասման, որ մենք կարող ենք զիջումներ անել այդ տարածաշրջանային նախագծերի կապակցությամբ»⁴¹: Թուրքիայի և Հայաստանի միջև քաղաքական հարաբերությունների և դիվանագիտական շփումների համատեքստում բավականին ուշագրավ էր 2000 թ. Կովկասում անվտանգության և կայունության մեխանիզմ հիմնելու շուրջ երկու երկրների նախագահների միջև ընթացող նամակագրությունը⁴²:

Չնայած թուրքական իշխանությունների՝ Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման մասին հայտարարություններին և հայկական իշխանությունների պատասխան քայլերին, ինչպես նաև երկու երկրների ղեկավարների և պաշտոնատար անձանց միջև կայացած հանդիպումներին և նամակագրական շփումներին, այնուամենայնիվ հայ-թուրքական մերձեցման միտումները որևէ էական արդյունքի չհանգեցին: Ինչպես նախկինում, այնպես էլ 90-ականների երկրորդ կեսին, Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունները շարունակում էր պայմանավորել հիմնականում ադրբեջանական գործոնով և ԼՂ հիմնահարցի կարգավորված չլինելով, միաժամանակ ջանալով պահպանել երկկողմ շփումները և երկխոսության հնարավորությունները:

1998 թ. տեղի ունեցած իշխանափոխությունից հետո հայ-թուրքական հարաբերություններում պաշտոնական Երևանի դիրքորոշման մեջ առաջ քաշվեց Հայոց ցեղասպանության խնդիրը: ՀՀ նորընտիր նախագահ Ռ. Քոչարյանը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը ներառեց արտաքին քաղաքականության գերակա խնդիրների շարքում, որի մասին առաջին անգամ հրապարակավ ելույթ ունեցավ 1998 թ. հոկտեմբերին ՄԱԿ-ի ամբիոնից⁴³: Ակնհայտ է, որ Հայոց ցեղասպանության միջազգայնացումը Թուրքիայի կողմից ընկալվում է որպես իրական վտանգ: Դրա դեմ պայքարը բարձրացվել է Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգ՝ առաջնային խնդրի վերածվելու և հայ-թուրքական հարաբերություններում ԼՂ հիմնահարցը ետին պլան մղելու պոտենցյալ հնարավորությամբ:

Երկրորդ ենթագլխում՝ «Թուրք-ռուսական մրցակցությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ.», խոսվում է 90-ականներին թուրք-ռուսական հարաբերություններում առկա մի շարք հիմնահարցերի մասին, որոնք լարվածության մեջ

⁴¹ Մեդիամաքս գործակալություն, 26.11.1999:

⁴² ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 6, գործ 63, էջ 9-10:

⁴³ Արամ Անանյան, նշվ աշխ., էջ 9:

էին պահում երկկողմ հարաբերությունները: Կովկասյան տարածաշրջանում թուրք-ռուսական մրցակցության ոլորտում հիմնականում հայ-ադրբեջանական և վրաց-աբխազական հակամարտություններն էին, կասպիական նավթի արտահանման ուղիների շուրջ թուրք-ռուսական մրցապայքարը, ինչպես նաև ռուսական ռազմական ներկայությունը Վրաստանում և Հայաստանում: Հարավային Կովկասի հակամարտություններում իր միջնորդական նախաձեռնությունների միջոցով Ռուսաստանը փորձում էր ամրապնդել իր ազդեցությունը տարածաշրջանում և խափանել Թուրքիայի ծրագրերի իրագործումը: Այդ տեսակետից իր առանձնահատուկ տեղն ունի ԼՂ հակամարտությունը, որը դարձավ Հարավային Կովկասում թուրք-ռուսական հակասությունների կիզակետը⁴⁴: ԼՂ հակամարտությունում Թուրքիայի և Ռուսաստանի միջև մրցակցություն էր ընթանում հակամարտությունում որպես միջնորդ հանդես գալու հարցի շուրջ: Թուրքիան ակտիվ ջանքեր էր գործադրում՝ ներգրավվելու ԼՂ հակամարտության բանակցային գործընթացում: Ռուսաստանը Թուրքիային չէր ընդունում որպես լուրջ միջնորդ կողմ ԼՂ հակամարտության բանակցային գործընթացում՝ իրավամբ գտնելով, որ այդ հարցում Հայաստանի և Ղարաբաղի բացասական դիրքորոշման պայմաններում Թուրքիան չի կարող ակտիվ դերակատարություն ունենալ հակամարտության կարգավորման գործում: Ուստի Մոսկվան Թուրքիային վերապահում էր միայն երկրորդական դեր, որը ոչ մի կերպ չէր կարող համեմատելի լինել իր դերակատարության հետ⁴⁵:

Վրաց-աբխազական հակամարտությունն իր ուրույն տեղն է ունեցել 1990-ականների սկզբներին ընթացող ռուս-թուրքական մրցակցության համատեքստում, քանզի թե՛ Թուրքիան և թե՛ Ռուսաստանն այս հակամարտությունում ունեին իրար հակասող սեփական շահեր, ուստի ռուս-թուրքական շահերի բախումն անխուսափելի էր: 1990-ականների երկրորդ կեսից Թուրքիան սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել Վրաստանին: Դրա պատճառն այն էր, որ Թուրքիան մտահոգված էր Հարավային Կովկասում Ռուսաստանի դիրքերի ուժեղացմամբ: Մյուս կողմից, Վրաստանի նշանակության ուժեղացումը՝ որպես էներգակիրների փոխադրման տարանցիկ երկրի, ստիպեց Թուրքիային հակվել Վրաստանի կողմը: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նրա ներգրավվածությունը վրաց-աբխազական հակամարտությունում պայմանավորված էր նախևառաջ նրանով, որ Աբխազիան, գտնվելով Սևծովյան ավազանում և սահմանակից լինելով Ռուսաստանի Դաշնության մաս կազմող Հյուսիսային Կովկասին, կարևոր ռազմավարական նշանակություն ուներ Ռուսաստանի համար: Բացի այդ, երկրամասում տե-

ղակայված էին ռուսաստանյան զինվորական ստորաբաժանումները, ուստի Մոսկվան հայտարարեց, որ Աբխազիան առանձնակի կարևոր ռազմավարական նշանակություն ունի Ռուսաստանի անվտանգության շահերի տեսանկյունից⁴⁶:

Թուրք-ռուսական հարաբերությունների լարվածության գլխավոր պատճառներից էր նաև Ռուսաստանի ռազմական ներկայությունը Հարավային Կովկասում և հատկապես 90-ականներին ռուսական ռազմական բազաների առկայությունը Վրաստանում և ՀՀ-ում: Այս ամենը Թուրքիայի կողմից դիտվում էր որպես լուրջ սպառնալիք երկրի անվտանգությանը, ինչը հանգեցրեց նրան, որ Թուրքիան սկսեց ակտիվորեն Ռուսաստանին մեղադրել 1990թ. Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի դրույթների խախտման մեջ: 1990-ականների երկրորդ կեսից Ռուսաստանը վերադասավորեց իր ուժերը, հստակեցրեց իր արտաքին քաղաքականության առաջնահերթությունները և սկսեց ակտիվացնել իր քաղաքականությունը Հարավային Կովկասում, ինչի արդյունքում լուրջ հարված հասցվեց Թուրքիայի քաղաքականությանը տարածաշրջանում: Ռուսաստանի անմիջական միջնորդությամբ հրադադարներ կնքվեցին ինչպես ԼՂ հակամարտության, այնպես էլ վրաց-աբխազական հակամարտության գոտիներում, որի շնորհիվ Ռուսաստանը ոչ միայն կարողացավ կասեցնել Թուրքիայի ակտիվ ջանքերը՝ իր ազդեցության գոտու մեջ ներառելու Հարավային Կովկասը, այլև ինքը նշանակալի չափով վերականգնեց իր աշխարհաքաղաքական դիրքերը տարածաշրջանում:

Երրորդ ենթագլխում «Թուրքիայի ռազմաքաղաքական համագործակցությունը Ադրբեջանի և Վրաստանի հետ 1995-2001 թթ.» ուսումնասիրվում է Ադրբեջանում և Վրաստանում իր ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդմանն ուղղված Թուրքիայի քաղաքականությունը, դրան նպաստող կարևոր գործոններն ու հիմնական նախադրյալները: 90-ականների կեսերին Թուրքիային հաջողվեց էապես ամրապնդել իր դիրքերն Ադրբեջանում և Վրաստանում, որը մեծապես կապված էր թուրք-ադրբեջանական և թուրք-վրացական ռազմաքաղաքական համագործակցության սերտացմամբ: Թուրքիայի և Ադրբեջանի նախագահների կողմից բազմիցս հնչեցրած «մեկ ազգ, երկու պետություն» բանաձևն ամուր արմատներ էր ձգել երկկողմ հարաբերություններում: 90-ականների երկրորդ կեսից Թուրքիան շարունակում էր ռազմաքաղաքական աջակցությունը Ադրբեջանին՝ մշտապես խորացնելով իր հարաբերություններն այդ երկրի հետ և պաշտպանելով նրա շահերը միջազգային ասպարեզում: 90-ականների վերջերին Բաքվի և Անկարայի միջև ռազմական համագործակցության ընդլայնման լուրջ միտումներ էին նկատվում: Դրա վառ օրինակներից էր այն, որ թուրքական ուսումնական հաստատություններում սովորում էին ավելի քան 400 ադրբեջանական զինծառա-

⁴⁴ Ռուբեն Սաֆրաստյան, Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. աշխարհառազմավարական զինադադար.- 21-րդ դար, 2005, № 4, էջ 37:

⁴⁵ Zbigniew Brzezinski and Paige Sullivan, *Russia and Commonwealth of Independent States: documents, data, and analysis*, New York, 1997, p. 153:

⁴⁶ Mark Smith., *Pax Russica: Russia's Monroe Doctrine.*- RUSI, Whitehall Paper Series 1993, p. 54:

յողներ, իսկ աղբբեջանական բանակում ծառայում էին մինչև 70 թուրքական սպաներ⁴⁷: Միաժամանակ, պաշտոնական Բաքուն կողմ էր արտահայտվել աղբբեջանական բանակի՝ հյուսիսատլանտյան դաշինքի չափանիշների համապատասխանեցմանը: Ըստ էության, այդ երկու պետությունների ռազմական համագործակցությունը գնալով ստանում էր ռազմական դաշինքի ձև, որն ուներ հստակ արտահայտված հակահայկական ուղղվածություն:

Թուրք-վրացական հարաբերությունները սերտորեն կապված են Հարավային Կովկասում Թուրքիայի ռազմավարական հաշվարկների հետ: 90-ականների սկզբին նկատվող զգուշավոր քաղաքականության ժամանակաշրջանը 90-ականների երկրորդ կեսից թևակոխեց համընդհանուր համագործակցության փուլ: Մասնավորապես ռազմական ոլորտում համագործակցության շրջանակներում Թուրքիան սկսեց աջակցել Վրաստանին ռազմական կրթության և Վրաստանի ազգային բանակի կազմավորման գործընթացում⁴⁸: Միայն 1998-1999 թթ. Թուրքիան վրացական զինված ուժերին և սահմանապահներին տրամադրեց մոտ 10 մլն. դոլար⁴⁹: Բացի այդ, Վրաստանը, ելնելով իր ազգային և ռազմավարական շահերից, կիսում էր Թուրքիայի մտահոգությունները կապված Ռուսաստանի դիրքերի ամրապնդմամբ հարավկովկասյան տարածաշրջանում և ակտիվ քայլեր էր ձեռնարկում՝ զարգացնելու հարաբերությունները Թուրքիայի հետ: Թուրքիային մեծապես օգնեց այն հանգամանքը, որ թե՛ Ադրբեջանը և թե՛ Վրաստանը 90-ականների երկրորդ կեսից ակնհայտ արևմտամետ քաղաքականություն էին վարում և ձգտում էին սերտացնել իրենց հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ: Միջազգային զարգացումները և հատկապես սեպտեմբերի 11-ի ահաբեկչական իրադարձությունների արդյունքում ԱՄՆ-ի ակտիվ ներգրավվածությունը հետխորհրդային տարածաշրջանում, նույնպես նպաստավոր էր Թուրքիայի համար՝ խթանելով նրա դիրքերի ամրապնդումը Վրաստանում:

Աշխատանքի երրորդ գլուխը վերնագրված է «ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ»: Այստեղ հանգամանորեն ուսումնասիրվում են հարավկովկասյան տարածաշրջանում Թուրքիայի հետապնդած աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական նպատակները, քննության է առնվում այդ նպատակների իրագործմանն ուղղված Թուրքիայի ակտիվ քաղաքականությունը, ներկայացվում են տարածաշրջանում որպես կարևորագույն աշխարհատնտեսական և քաղաքական գործոն հանդես գալու Թուրքիայի փորձերը:

Առաջին ենթագլխում «Հարավային Կովկասի ամխաջրածնային հարստությունների շահագործման հիմնախնդիրը և Թուրքիան» քննարկվում են հա-

րավկովկասյան ամխաջրածնային հարստությունների շահագործման, արտահանման հիմնական երթուղիների շուրջ ընթացող մրցապայքարը և դրանում Թուրքիայի դերակատարությունը: Մասնավորապես, անդրադարձ է կատարվում Թուրքիայի համար չափազանց կարևոր երկու՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում նախագծերին: Բացի այդ, մեծ ուշադրություն է դարձվում Թուրքիայի համար հսկայական նշանակություն ունեցող «Երկնագույն հոսք» նախագծին, նրա իրականացման շուրջ ընթացող քննարկումներին և տարածայնություններին:

Հարավկովկասյան և կասպիական ամխաջրածնային հարստությունների շահագործման գործընթացում Թուրքիան որոշակի հաջողությունների հասավ, քանզի, օգտվելով իր աշխարհագրական նպաստավոր դիրքից և ստանալով Արևմուտքի՝ մասնավորապես ԱՄՆ աջակցությունը, Թուրքիան կարողացավ հասնել նրան, որ իր անմիջական մասնակցությամբ սկսեցին իրականացվել Թուրքիայի համար չափազանց կարևոր երկու նախագծեր՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում նախագծերը, որոնց վերջնական շահագործման արդյունքում Թուրքիան հույս ունի ոչ միայն ստանալ հսկայական ֆինանսական եկամուտներ, այլ նաև ամրապնդել իր աշխարհատնտեսական և ռազմավարական դիրքերը ողջ տարածաշրջանում՝ նպատակ հետապնդելով հետագայում այն օգտագործել Եվրամիության հետ հարաբերություններում: Բացի այդ, Թուրքիան, չնայած ԱՄՆ-ի հզոր ճնշմանը, երկրի պետական կառույցների ու կոալիցիոն կառավարության ներսում առկա տարածայնություններին, այնուամենայնիվ բարեհաջող ավարտին հասցրեց ռուս-թուրքական բանակցությունները՝ համաձայնվելով իրականացնել Թուրքիայի համար հսկայական նշանակություն ունեցող «Երկնագույն հոսք» նախագիծը:

Երրորդ գլխի վերջին ենթագլխում «Թուրքիայի և Հարավային Կովկասի երկրների հարաբերությունները Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում» հանգամանալից կերպով քննարկման են արժանացել Սևծովյան ավազանի երկրների տնտեսական համագործակցության գաղափարի իրականացման գործընթացում Թուրքիայի քաղաքականությունը, նրա հետապնդած նպատակներն ու սպասելիքները: Թուրքիան, նախաձեռնելով Սևծովյան Տնտեսական Համագործակցության ստեղծումը և օգտվելով տվյալ ժամանակաշրջանի ընձեռված հնարավորություններից՝ նպատակ էր հետապնդում ոչ միայն ստանձնել տարածաշրջանի առաջնորդի դերը, ընդլայնել իր քաղաքական և տնտեսական ազդեցությունն Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում, այլ նաև հասնել իր գլխավոր նպատակներից մեկին՝ դառնալ ԵՄ լիիրավ անդամ: Այս համատեքստում բավական հետաքրքիր է հնչում Ս. Դեմիրբեյի հայտարարությունն այն մասին, թե ոչ որ չի կարող թեկուզ մի քայլ կատարել Բալկաններում, Կովկասում և Եվրոպայում՝ առանց Թուրքիայի գիտության, և Թուրքիայի

⁴⁷ Гаджиев К.С., Геополитика Кавказа, Москва, 2003, с.354:

⁴⁸ См.в том же месте:

⁴⁹ Независимая Газета, 12.05.1998; Гаджиев К.С., նշվ. աշխ., с. 355-356:

նախկին նախագահ Թ. Օզալի այն միտքը, որ եթե կոպիտ սխալներ թույլ չտրվեն, ապա 21-րդ դարը կպատկանի Թուրքիային⁵⁰: Բացի այդ, ՄՃՏՀ-ի ստեղծումը կարելի է դիտարկել որպես թուրքական դիվանագիտության կարևոր ձեռքբերում, քանզի այս կազմակերպությունը թերևս այն եզակի կառույցն է, որտեղ Թուրքիան ունի ոչ միայն կարևոր դերակատարություն, այլ նաև լուրջ հենարան՝ ի դեմս ՄՃՏՀ անդամ հանդիսացող մահմեդական հանրապետությունների:

Վերջաբանում ամփոփվում են աշխատանքի արդյունքները և արվում հետևյալ եզրահանգումները:

- Այսպիսով, ԽՍՀՄ-ը փլուզումը և Արևմուտքի գործուն աջակցությունը Թուրքիային դարձան 1990-ական թթ. սկզբին Հարավային Կովկասի տարածաշրջանում Թուրքիայի քաղաքականության ակտիվացման հիմնական դրդապատճառները: Էական նշանակություն ունեցող նաև տարածաշրջանում ՌԴ-ի սկզբնական թուլությունը: Վերոհիշյալից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով Ադրբեջանում, Հայաստանում ու Վրաստանում առկա սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը և տարածաշրջանում ընթացող միջէթնիկական հակամարտությունները՝ Թուրքիան ակտիվ ջանքեր գործադրեց՝ ամրապնդելու իր դիրքերը Հարավային Կովկասի նորանկախ հանրապետություններում, որտեղ նա աշխարհատնտեսական, ռազմավարական և անվտանգության տեսանկյունից լուրջ շահեր էր հետապնդում:
- 1990-ականների սկզբներին Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության ակտիվացման կարևոր ներքին դրդապատճառներից են ԽՍՀՄ փլուզմամբ պայմանավորված՝ Թուրքիայում նոր թափով սկիզբ առած պանթյուրքիզմի գաղափարախոսության դրսևորումները: Այդ իսկ պատճառով Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության առանցքային բաղադրիչներից են թուրք-ադրբեջանական հարաբերությունները: Թուրք-ադրբեջանական հարաբերությունների զարգացման և ամրապնդման հարցում առանձնակի կարևոր գործոն հանդիսացավ պանթյուրքիստական հայացքներ կրող և ընդգծված թուրքամետ կողմնորոշում ունեցող Արուֆազ Էլչիբեյի իշխանության գալը:
- Վրաց-աբխազական հակամարտության ընթացքում Թուրքիան, ելնելով իր ռազմավարական շահերից, խուսաճավում էր վրացական և աբխազական կողմերի միջև՝ ջանալով օգտագործել հակամարտության յուրաքանչյուր կողմին՝ Վրաստանում իր դիրքերի ամրապնդման համար: Մի կողմից, Թուրքիան պաշտոնապես հանդես էր գալիս Վրաստանի տարածքային ամբողջականության օգտին. մյուս կողմից, չէր խոչընդոտում

⁵⁰ Turkish Daily News, 05.06.1992:

Թուրքիայի հասարակական շրջանակներին և չերբեզական սփյուռքին ակտիվ օգնություն ցուցաբերել Աբխազիային: Մեր կարծիքով, Աբխազական հիմնահարցում Թուրքիայի ոչ հստակ դիրքորոշումն իր բացասական ազդեցությունը բողեց թուրք-վրացական հարաբերությունների վրա:

- Թուրքիան Ղարաբաղյան հակամարտության ընթացքում Ադրբեջանին ցուցաբերեց ոչ միայն հսկայական ռազմատեխնիկական, ֆինանսական աջակցություն, այլև իր անվերապահ աջակցությունը հայտնեց միջազգային ատյաններում ադրբեջանական կողմին: Այսպիսով, ԼՂ հակամարտությունում Թուրքիայի ակնհայտ հակահայկական դիրքորոշման արդյունքում հոգս ցնդեցին Անկարայի միջնորդ հանդիսանալու ջանքերը: Մեր կարծիքով, Թուրքիայի նմանատիպ մերժողական և հակահայկական քաղաքականությունն իր բացասական ազդեցությունը ունեցավ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունները որակական նոր փուլ թևակոխելու գործում:
- Թեև ԼՂ հակամարտությունում գինազազարի հաստատումից հետո հայ-թուրքական հարաբերություններում նկատվում էին մերձեցման միտումներ, դրանք որևէ էական արդյունքի չհանգեցրին: Ինչպես նախկինում, այնպես էլ 1990-ականների երկրորդ կեսին Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունները շարունակում էր պայմանավորել հիմնականում ադրբեջանական գործոնով և ԼՂ հիմնահարցի շկարգավորված լինելով՝ միաժամանակ ջանալով պահպանել երկխոսության հնարավորությունները: Մյուս կողմից, Հայոց ցեղասպանության միջազգայնացումը Թուրքիայի կողմից ընկալվում է որպես իրական վտանգ: Դրա դեմ պայքարը բարձրացվել է Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգ՝ առաջնային խնդրի վերածվելու և հայ-թուրքական հարաբերություններում ԼՂ հիմնահարցը ետին պլան մղելու ռեալ հնարավորությամբ:
- Հարավային Կովկասում թուրք-ռուսական ճրջակցության հիմնական նախնակներն էին Ղարաբաղյան և վրաց-աբխազական հակամարտությունները. կուսակալական մայրի արտահանման ուղիների շուրջ թուրք-ռուսական ճրջապայքարը, ինչպես նաև Ռուսաստանի ռազմական ներկայությունը Վրաստանում և Հայաստանում, որը Թուրքիայի կողմից դիտվում էր, իբրև Եվրոպայում սովորական գինված ուժերի մասին պայմանագրի խախտում:
- 1990-ականների կեսերին Թուրքիային հաջողվեց էապես ամրապնդել իր դիրքերը Ադրբեջանում և Վրաստանում, որը մեծապես կապված էր թուրք-ադրբեջանական և թուրք-վրացական ռազմաքաղաքական համագործակցության սերտացման հետ: Թուրք-ադրբեջանական ռազմաքա-

դաքական համագործակցության ընդլայնումը դարձավ լուրջ սպառնալիք Հայաստանի ազգային անվտանգության համար:

- 1990-ականների սկզբին Վրաստանի նկատմամբ Թուրքիայի գգուշավոր քաղաքականության ժամանակաշրջանը 90-ականների երկրորդ կեսից քնակոխեց համընդհանուր համագործակցության փուլ, ինչին նպաստեց տարածաշրջանում ՌԴ-ի դիրքերի ամրապնդմամբ պայմանավորված Վրաստանի մտահոգությունը: Թուրք-վրացական հարաբերությունների ամրապնդման նպաստավոր գործոնների թվում էին նաև՝ Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ի անդամ լինելը և 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական իրադարձությունների արդյունքում ԱՄՆ ակտիվ ներգրավվածությունը տարածաշրջանում:
- Հայաստանի անվտանգության տեսանկյունից թուրք-վրացական ռազմաքաղաքական համագործակցության սերտացումը կարող է ունենալ բավականին անկանխատեսելի հետևանքներ: Ներկայումս Վրաստանը Հայաստանի համար շատ կարևոր տարանցիկ երկիր է, ուստի թուրք-վրացական հետագա մերձեցումը կարող է լուրջ վտանգի ենթարկել հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունները: Բացի այդ, Թուրքիան, շրջափակման ենթարկելով Հայաստանը, ձգտում է Վրաստանին ներառել թուրք-ադրբեջանական համագործակցության ոլորտի մեջ, ինչը նույնպես շատ վտանգավոր է Հայաստանի ազգային անվտանգության համար, քանզի դա կարող է հանգեցնել ոչ միայն Հայաստանի արտաքին առևտրի ծավալների ու բեռնափոխադրումների կտրուկ նվազմանը, այլև լրջորեն սպառնալ Վրաստանի հայաբնակ շրջանների անվտանգությանը:
- Մեր կարծիքով Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում նախագծերի իրականացումը հանդիսանում է Թուրքիայի լուրջ հաջողությունը, որը դրանով էականորեն ամրապնդում է իր աշխարհաքաղաքական դիրքերը Հարավային Կովկասում և Կասպիական ավազանում: Դրա հետ մեկտեղ «Երկնագույն հոսք» նախագծի իրականացումը նպաստում է թուրք-ռուսական հարաբերությունների սերտացմանը և Թուրքիան դարձնում է ներգակիրների փոխադրման կարևորագույն տարանցիկ երկիր:
- Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում նախագծերի իրականացումը այն ձևով, ինչպես այն կառուցվեց, չի բխում Հայաստանի շահերից: Դրանց կարևոր նպատակներից է ոչ միայն նվազեցնել Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանում, այլև Հայաստանը մեկուսացնել տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներից: Մեր կարծիքով, եթե վերոհիշյալ նախագծերի իրականացման գործ-

ընթացում ներգրավված լինել Հայաստանը, որի տարբերակը 1990-ականների սկզբներին լրջորեն քննարկվում էր որպես տարանցիկ երկիր, ապա անշուշտ այս նախագծերը բավականին շահեկան կլինեին Հայաստանի համար:

- ՄՃՏՀ ստեղծմամբ Թուրքիան ձեռք բերեց նոր հնարավորություն՝ բազմակողմ այդ ձևաչափի շրջանակներում սևծովյան տարածաշրջանում իր քաղաքական և տնտեսական ազդեցությունը ամրապնդելու և ԵՄ-ին անդամակցելու գործընթացում ՄՃՏՀ-ն որպես ցատկահարթակ օգտագործելու համար: Այդ իսկ պատճառով ՄՃՏՀ ստեղծումը կարելի է դիտարկել որպես թուրքական դիվանագիտության հաջողություն՝ նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ կառույցի շրջանակներում Թուրքիայի կարևոր դերին գումարվում է լուրջ հենարանը, ի դեմս ՄՃՏՀ անդամ-մասնեղական հանրապետությունների՝ դրանով իսկ բարձրացնելով նրա կշիռը կազմակերպության մեջ:
- Հայաստանի տեսակետից բավականին շահեկան է ՄՃՏՀ անդամ հանդիսանալը, քանզի լինելով ՄՃՏՀ հիմնադիր անդամ՝ կազմակերպության շրջանակներում Հայաստանը փորձում է ակտիվորեն մասնակցել տարածաշրջանային համագործակցությանը՝ ձգտելով իր համար ստեղծել տարածաշրջանում ազատ ապրանքաշրջանառության հնարավորություններ: Բացի այդ, սա այն կառույցն է, որտեղ Հայաստանն ու Թուրքիան կարող են ինստիտուցիոնալ առումով համագործակցել:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Թուրքիայի գործունեությունը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի նախապատրաստական աշխատանքների գործընթացում,- «Մերձավոր Արևելք, պատմություն, քաղաքականություն, մշակույթ», (հոդվածների ժողովածու), հատոր 3, Երևան, «Ձանգակ-97», 2006, էջ 42-47:
2. Թուրքիայի ռազմա-քաղաքական հարաբերությունները Վրաստանի հետ,- «Հայկական բանակ», թիվ 4 (54), Երևան, «Ամարաս», 2007, էջ 7-18:
3. «Երկնագույն հոսք» գործարքը որպես ռուս-թուրքական մերձեցման նախադրյալ,- «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ», (հոդվածների ժողովածու), հատոր 4, Երևան, «Լուսակն», 2007, էջ 23-29:
4. «Երկնագույն հոսք». ռուս-թուրքական մերձեցման կռիվ,- «Հայաստան: ֆինանսներ և էկոնոմիկա», # 9 (86), Երևան, «Տիգրան Մեծ», 2007, էջ. 50-52:

ГРИГОР МИХАЕЛОВИЧ АРШАКЯН

ПОЛИТИКА ТУРЦИИ В ЮЖНОМ КАВКАЗЕ В 1991-2001 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 — “Всемирная история”

Защита состоится 29-го мая 2008г. в 15:00 часов на заседании действующего при Институте востоковедения НАН РА специализированного совета 006 “Всемирная история”, по адресу: 375019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24 г.

РЕЗЮМЕ

Исследование южнокавказской политики Турецкой Республики в 90-х годах прошлого века имеет как серьезное научное значение, так и политическую актуальность и важность. Всеобъемлющее изучение этой темы актуально не только в смысле определения основных направлений внешней политики Турции этого периода, но также для более глубокого восприятия и оценки важнейших аспектов южнокавказской политики Турции в наши дни.

Выбор темы работы обусловлен необходимостью всестороннего и основательного изучения вопросов, связанных с региональной политикой Турции. Целью научной работы является изучение направлений южнокавказской политики Турции, определение ее задач и приоритетов, раскрытие особенностей проблем, стоящих перед Турцией в регионе, выявление достижений и упущений политики Анкары в Южном Кавказе. В ходе написания работы использован ряд турецких и иных источников, которые впервые вводятся в научный оборот.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников и литературы.

Во введении дается обоснование актуальности исследования, обозначаются его цели и методическая основа, раскрывается научная новизна исследования, обосновывается практическое значение работы, определяются временные рамки исследования, представляется обзор использованных источников и литературы.

Первая глава диссертации озаглавлена **“ВНЕШНЕПОЛИТИЧЕСКИЕ ПРИОРИТЕТЫ ТУРЦИИ В ЮЖНОМ КАВКАЗЕ ПОСЛЕ РАСПАДА СССР”** и состоит из трех параграфов. В первом параграфе *“Развал СССР и изменение внешней политики Турции в Южном Кавказе”* рассматривается активизация деятельности Анкары на постсоветском пространстве в первые годы распада СССР. В частности, освещаются основные предпосылки

беспрецедентной активизации Турции в Южном Кавказе и Центральной Азии и факторы, способствующие этому.

Во втором параграфе *“Турция и грузино-абхазский конфликт в 1991-1994 гг.”* подробно освещается позиция Анкары в грузино-абхазском военном противостоянии. Рассматривается содействие, оказанное абхазской стороне черкесской и абхазской диаспорами Турции.

Третий параграф *“Политика Турции в отношении Армении и проблема Нагорного Карабаха в 1991-1994 гг.”* посвящен изучению армяно-турецких отношений после распада СССР и восстановления независимой армянской государственности. В частности, рассматриваются цели южнокавказской политики Турции в 90-е годы и подходы Анкары в отношении Армении в рамках этой политики.

Вторая глава работы **“ЮЖНЫЙ КАВКАЗ И ТУРЦИЯ В 1995-2001 ГГ.”** посвящена изучению внешней политики Турции в регионе во второй половине 90-х годов и состоит из параграфов. В первом параграфе *“Политика Турции в отношении Армении в 1995-2001 гг.”* подробно освещаются основные подходы политики Турции в отношении Армении в 1995-2001 гг. Рассматривается политика Анкары в отношении Еревана после перемирия в нагорно-карабахском конфликте, усилия армянских и некоторых турецких деловых кругов по установлению политических и дипломатических отношений между двумя странами.

Во втором параграфе *“Турецко-русское соперничество в Южном Кавказе в 1991-2001 гг.”* изучается ряд проблем, имеющих в двусторонних отношениях. Основными факторами соперничества между Москвой и Анкарой являлись армяно-азербайджанский и грузино-абхазский конфликты, а также военное присутствие России в Южном Кавказе, особенно основание российских военных баз в Грузии и Армении, которое рассматривалось Турцией как нарушение Договора об обычных вооруженных силах в Европе.

В третьем параграфе *“Военно-политическое сотрудничество Турции с Азербайджаном и Грузией в 1995-2001 гг.”* рассматривается политика Турции, направленная на усиление военно-политического влияния в Азербайджане и Грузии, основные факторы и предпосылки, способствующие этому.

Третья глава работы **“ЮЖНЫЙ КАВКАЗ В СТРАТЕГИЧЕСКИХ ПЛАНАХ ТУРЦИИ”** посвящена геополитическим и геоэкономическим целям Турции в регионе Южного Кавказа, изучается политика Анкары, направленная на реализацию этих целей, представляются усилия Турции в направлении становления в качестве важнейшего геополитического фактора в регионе. В первом параграфе *“Проблема эксплуатации углеводородных ресурсов*

Южного Кавказа и Турция” обсуждается соперничество в эксплуатации углеводородных ресурсов региона и определении основных маршрутов их транспортировки и роль Турции. В частности, рассматриваются два, очень важных для Анкары проекта Баку-Тбилиси-Джейхан и Баку-Тбилиси-Эрзрум. Кроме того, особое внимание уделяется имеющему огромную значимость для Турции проекту “Голубой поток” и разногласиям вокруг вопроса его реализации.

Во втором параграфе *“Отношения Турции и стран Южного Кавказа в рамках Организации Черноморского Экономического сотрудничества”* изучается политика Турции в процессе реализации идеи экономического сотрудничества стран черноморского бассейна, ее цели и ожидания.

В заключении обобщаются основные выводы диссертации.

GRIGOR ARSHAKYAN

THE POLICY OF TURKEY IN SOUTHERN CAUCASUS IN 1991-2001

